

# ԿԱՊԻԿՆ ՈՒ ԴԼՓԻՆԸ

Օր մը նաւաստիներ իրենց առագաստանաւով ծով կ'երթան: Անոնցմէ մէկը իր ընտանի կապիկը իր հետ կը բերէ, որովհետեւ ճանապարհը շատ երկար է: Երբ անոնք ծովափէն կը հեռանան եւ կը հասնին ծովուն գրեթէ մէջտեղը, սարսափելի փոթորիկ մը կը պատահի ու առագաստանաւը կը սկսի ջուրով լեցուիլ:

Բոլոր նաւաստիները ջուրին մէջ կ'իյնան, անոնց հետ ալ՝ կապիկը, որ նոյն վայրկեանին յոյսը կը կտրէ ու կը սպասէ վախճանին:


Յանկարծ դլփին մը կը յայտնուի եւ կ'ազատէ զինք: Անոնք շուտով կը հասնին կղզի մը, ուր կապիկը կ'իջնէ դլփինին մէջքէն:

- Այս վայրը գիտե՞ս,- կը հարցնէ Դլփինը:
- Անկասկած, ես եմ որ գիտեմ: Իսկ դուն գիտե՞ս որ ես եմ այս կղզիին թագաւորը:

Դլփինը իմանալով որ կղզիին մէջ ոչ ոք կը բնակի.

- Այդ մէկը շա՛տ դուրսին է: Մինչեւ այն ատեն որ դուն այս կղզիին միակ արարածն ես, բնականաբար դուն կ'ըլլաս թագաւորը, կ'ըսէ ու կը հեռանայ:

Այս առակէն կը հասկնանք, թէ անոնք որոնք կը ստեն ու կը պարծենան, կրնան յաճախ դժուարութիւններու հանդիպիլ:



ԹԻՒՔ ՊԱՏՐԱՍՏԵՅՑ՝ ՄԱՐՄԻՆԻ ԱՇՈՏԵՆ-ՇԱՀԻՆԵՆ, ՆԿԱՐԱՍԱՐՈՅՑ՝ ՈՒՅՅՈՒ ՔԵՇԻՇԵՆ

$6$   
 $+2$     $-4$     $+3$   
 $-1$   
 $+3$     $-5$     $+2$   
 $-1$   
 $+2$   
 $-1$

ԳՈՒՆԱԻՐԸ՝ ՀԵՏԵԻՇԱԼ ՊԱՏԿԵՐԸ  
ՆԱԽԱՍԻՐԱԾ ԳՈՅՆԵՐՈՎԿԻ:

ՆՇԱՆՆԵՐՈՒՆ ՀԵՏԵԻՇԼՈՎ ԳՐԸ՝  
ՃԻՇԴ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ:

9 :դռովոտտոտո ղվձմգի




ԽԱՍՈՂԵՐ

ՓՈՐՁԸ՝ ԳՏԵԼ ՊԱՅՈՒԱԾ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ  
ԵՎ ԳՈՒՆԱԻՐԸ՝ ԶԱՆՈՆԸ:



ԵԿԸՔ ԹԻՇԵՐՈՒՆ ՀԵՏԵԻՇԼՈՎ, ՄԻԱՍԻՆ  
ՍՈՐԿԻՆՔ ԳԾԵԼ ԱՅՍ ՈՐՏԸ:



# ՔԱՉ ՆԱՉԱՐ

Յովհաննես Թումանյան

Կար ու չկար, խեղճուկրակ մարդ մը կար, Նագար անունով: Այս Նագարը ծոյլ, անճարակ եւ վախկոտ մարդ մըն էր: Օրը մինչեւ իրիկուն՝ կնոջը քովէն չէր գատուէր. անոր հետ դուրս կ'ելլէր, անոր հետ տուն կու գար: Այս պատճառով՝ անունը Վախկոտ Նագար դրած էին:

Գիշեր մը, Վախկոտ Նագարն ու կինը դրան սեմին կը նստէին: Յանկարծ Վախկոտ Նագար գոչեց.

- Ա՛խ կնիկ, ճիշդ ճամբայ կտրելու գիշեր է ասիկա...: Սատանան կ'ըսէ՛ ելի՛ր, գնա՛ Զնդկաստանէն եկող Շահին կարաւանը կողոպտէ, բե՛ր տունը լեցո՛ւր ի՛նչ որ կայ...:

- Ձայնդ կտրէ՛, նստէ՛ տեղդ,- չախեց կինը,- սա ճամբայ կտրողին նայեցէք...:

Նագարը բարկացաւ.

- Անմիտ կին, ինչո՞ւ չես ձգեր որ երթամ կարաւան մը կողոպտեմ, բերեմ տունը լեցնեմ: Ես այդ մարդ չե՞մ...ինչի՞ կը ծառայէ մօրուքս, եթէ դուն պիտի համարձակիս խօսիլ ինձի դեմ...:

Երբ կինը տեսաւ որ խօսքը կ'երկարի, տուն մտաւ եւ դուռը երեսին գոցեց, ըսելով.

- Աղէ՛մ այդ վախկոտ գլխուդ որ չհոտի...գնա՛ հիմա ճամբայ կտրէ՛ եթէ կրնաս...:

Նագար կը մնայ դրան առջեւ՝ սաստիկ վախցած: Կ'աղաչէ, կը պաղատի, որ կինը դուռը բանայ, բայց ան մտիկ չ'ընէր, չի բանար: Ստիպուած, կ'երթայ պատի մը տակ կը քաշուի, դողալով կ'անցընէ գիշերը մինչեւ լուսաբաց: Յետոյ, արեւուն մէջ պատին տակ կը պառկի մտահոգ, ու կը սպասէ որ կինը գայ, գինք տուն տանի:

Ամառուան տաք օր է. ճանճերը կը բզգան: Մարդը այնքան ծոյլ է, որ քիթը սրբելու իսկ կը ծուլանայ: Ճանճերն ալ կու գան, քթին վրայ կը նստին, քիթին ծակերէն ներս կը մտնեն: Երբ շատ անհանգիստ կ'ընեն, ձեռքը կը վերցնէ վերջապէս ու երեսին կը զարնէ: Ճանճերը վար կը թափին՝ սատկած:

Նագար կը նայի անոնց, զարմացած: Կ'ուզէ համրել թէ մէկ զարնելով քանի՞ հատ սպանած է. բայց չի կրնար, որովհետեւ համրել չի գիտեր: Յետոյ կը մտածէ թէ՛ հազարէն պակաս պէտք չէ ըլլայ...:

- Ա՛խ,- կ'ըսէ ինքնիրեն,- ես այսպէս երիկմարդ եմ եղեր ու մինչեւ այսօր չեմ գիտցեր... Ես որ մէկ զարնելով հազար շունչ կը մարեմ... դեռ ի՞նչ կեցեր՝ այս անպիտան կնոջ կը սպասեմ:

Տեղէն վեր կը ցատկէ, կ'երթայ շիտակ իրենց գիւղի քահանային:

- Օրհնեցէ՛ք Տեր Զայր:

- Աստուած օրհնէ, որդի:

- Տեր Զայր, գիտե՞ս թէ ինչ պատահեցաւ:

Ու կը պատմէ իր քաջագործութիւնը, անլցնելով որ իր կնոջմէն պէտք է բաժնուի այլեւս: Կը խնդրէ միայն Տեր Զօրմէն, որ գրի առնէ իր արկածախնդրութիւնները, որպէսզի անյայտ չմնայ, ամէն ոք կարդայ ու գիտնայ...:

Տեր Զայրն ալ լաթի կտորի մը վրայ կը գրէ իբր կատակ.

Անյաղթ հերոս Քաչն Նագար,

Որ մէկ զարկով ջարդէ հազար:

Նագար այս լաթի կտորը կ'անցընէ բարակ փայտի մը ծայրը, մէջքին ժանգոտած երկաթ կտոր մը կը կապէ եւ դրացիին իշուն վրայ նստելով կը հեռանայ գիւղէն:

Իրենց գիւղէն դուրս ելլելէ վերջ ճամբայ մը կը բռնէ ու կ'երթայ: Ինքն ալ չի գիտեր թէ այդ ճամբան ո՞ւր կը տանի: Կ'երթայ՝ կ'երթայ՝, մէյ մըն ալ ետ կը նայի որ գիւղը հեռու մնացեր է: Երբ ասիկա կը տեսնէ՝ սիրտը դող կ'ելլէ: Վախը թեթեւցնելու համար կը սկսի երգել, քթին տակէն մրմռալ, ինքնիրեն խօսիլ եւ էջը յանդիմանել:

Երբ անտառ կը մտնէ, իրեն այնպէս կը թուի թէ ամէն մէկ ծառի տակէն, ամէն մէկ թուփի մէջէն կամ քարի ետեւէն գազան մը կամ աւազակ մը պիտի յարձակի իր վրայ, եւ սարսափած՝ կը սկսի պոռալ կանչել. ա՛յնպէս պոռալ կանչել որ՝ ականջդ կը խլանայ...:

Այդ միջոցին, անտառի ճամբէն գիւղացի մը կու գար՝ ձին իր ետեւէն քաշելով, ամէն բանէ անտեղեակ: Երբ այս զարհուրելի ձայնը կը լսէ, տեղն ու տեղը կը մնայ:

- Վա՛յ,- կը գոչէ,- աւազակներն են...:

Աստուած վկայ՝ ասոնք գլուխս ուսերուս վրայ չեն ձգեր...:

Կը թողու ձին, կը մտնէ անտառ եւ առանց ետեւը նայելու կը փախչի:

Բախտը ի՞նչպէս կ'ըլլայ...: Քաչ Նագար պոռալով կանչելով կու գայ որ ի՞նչ տեսնէ. թամբուած ձի մը ճամբուն մէջտեղ իրեն կը սպասէ: Անմիջապէս էշէն վար կ'իջնէ, կը հեծնէ ձիուն վրայ ու կը շարունակէ ճամբան:

Շատ կ'երթայ, քիչ կ'երթայ, կ'իյնայ գիւղի մը վրայ, գիւղը իրեն անծանօթ, ինքը գիւղին: Որո՞ւ դիմէ, ո՞ր դուռը զարնէ:

Յանկարծ տունէ մը զուռնայի ձայն մը կը լսէ, ձին կը քշէ դեպի այդ կողմը եւ կը տեսնէ տուն մը՝ ուր հարսանիք կայ: Շիտակ ներս.


- Բարե՛ւ ձեզ:

- Աստուծոյ բարին, բարի եկար հազար բարով, հրամե՛, Աստուծոյ հիւրը մեր գլխուն վրայ է:

Եւ կը տանին, սեղանին գլուխը կը նստեցնեն Նագարը իր դրօշակով: Ուստի իր սիրողին անուշ ըլլայ ի՞նչ որ կը բերեն իր առջեւ... տեսակ տեսակ ուտելիք թէ խմելիք...:

(ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ)





# ԿԱԿԱՊՕ

Կակապոս թութակներու տեսակին ամենէն մեծն է:  
Անոր կշիռը մօտաւոր չորս քիլոկրամ է:  
Այս ծանր կշիռով թռչունին համար վեր բարձրանալը դժուար գործ է, այդ պատճառով ալ Կակապոս միակ թութակն է որ չի թռչիր:

Անոր փետուրներուն գոյնը կանաչ-կապոյտ խառնուրդ մըն է: Այս տեսակի թռչունները կարողութիւն ունին միայն կարճատեւ պտոյտներ գործելու, միայն 20-30 մեթր բարձրութեան վրայ: Սակայն այս թութակները թռչելու կարողութենէն զրկուելով հանդերձ, անոնք օժտուած են ուժեղ

թաթերով, որոնց շնորհիւ Կակապոս արագօրէն կը շարժի գետնի վրայ եւ հեշտօրէն կը մագլցի նոյնիսկ ամենէն բարձր ծառերը:

Կակապոս անհետանալու վտանգին մէջ է: Այսօր բնութեան մէջ այս թութակներուն թիւը հարիւրը չ'անցնիր:

